«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Բաղդասարյան

Արմավիրի մարզի «Զանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Շուշան Վարդանյան

ԱՐՄԱՎԻՐ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան----------3 էջ

2. Գրականության ակնարկ----------5 էջ

3. Գործնական համատեքստ----------9 էջ

4. Հետազոտության ընթացքը----------10 էջ

5. Եզրահանգումներ----------14 էջ

6. Գրականության ցանկ----------17 էջ

7. Հավելված ---------- 18 էջ

ՆԱԽԱԲԱՆ

«Ով վեր բարձրանալու մեծ ցանկություն ունի՝

նա աստիճան կհորինի» :

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները վերածվում են համոզմունքների:

Ինչպես գիտենք անձի սոցիալականացման կարևորագույն օղակներից մեկը դպրոցն է: Դպրոցը ոչ միայն գիտելիք տվողի դերում է հանդես գալիս, այլ նրա առաջնային խնդիրներից է՝ բազմակողմանի զարգացած, դաստիարակված, արժեքներ կրող անձի ձևավորումը: Հետևաբար ուսուցչի կողմից կազմակերպված դասի, որն հանդիսանում է ուսումնական գործընթացի հիմնական միավոր, բովանդակությունը գիտական գիտելիքներն են, իսկ արդյունքը՝ սովորողների մոտ արժեհամակարգի, հոգևոր արժեքների ձևավորումը: Բոլոր դասարաններում էլ կան ակադեմիապես տարբեր մակարդակներում գտնվող սովորողներ, այդ պատճառով հնարավոր չէ բոլորին զինել բարձր գիտելիքներով, բայց պետք է անել հնարավորինս բարձր արժեքներ դաստիարակելու՝ արժեհամակարգ ձևավորելու համար: Ինչպես նաև կրթական տարբեր աստիճաններում սովորողներն ունենում են աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոց: Արժեհամակարգ դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հատուկ և հետևողական իրագործումը կարող է դրսևորվել նաև մաթեմատիկա առարկայի դասավանդման ընթացքում՝ դառնալով կարևորագույն պահանջ և բնորոշող հատկանիշ:

Այդ պատճառով, ուսուցիչն իր յուրաքանչյուր դասաժամ պետք է կազմակերպի՝ այն կապելով առօրյա կյանքի, գիտատխնիկական, մշակութային, քաղաքական, տնտեսական, հասարակագիտական առաջընթացի հետ։

Սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման գործընթացը չի սահմանափակվում դաս- դասարանային գործընթացով։ Այդ նպատակին են ծառայում արտադասարանական

միջոցառումները, ճանաչողական էքսկուրսիաները , հանդիպումներն արդի պատմական անհատների հետ և այլն։ Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են։ Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում։ Որպեսզի, ուսուցիչը կարողանա լուծել իր առջև դրված խնդիրները, որոնք բխում են առարկայական չփորոշչային պահանջներից, ապա պետք է իր առջև հստակ նպատակներ դնի։ Ըստ որի, սովորողը պետք է կարողանա.

. Պատկերացում ունենա մարդկության զարգացման շրջափուլերի, այդ ընթացքում մարդկության ունեցած ձեռքբերումների մասին։

. Ճանաչի իր և այլ ազգերի նշանավոր մաթեմատիկոսներին, որպեսզի համեմատելով արժևորի սեփականը։

.Ճանաչի իր ազգի մշակութային արժեքները։

. Ճանաչի տարբեր ժամանակներում մաթեմատիկայի ոլորտում պատմություն կերտած անհատներին , կարողանա համեմատել, վերլուծել, գնահատել նրանց գործունեությունը։

. Դիրքորոշում արտահայտի պատմական դեպքերի վերաբերյալ։

. Իր առջև դնի նպատակներ, խնդիրներ և դրանց հասնելու նպատակամղված քայլեր ձեռնարկի։

. Կարևորի բանավոր և գրավոր խոսքի հստակությունը, ճշգրտությունը, մատչելիությունը։

. Զարգացնի ստեղծագործ միտք և քննադատական մտածողություն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

« Երբեք մի արա այն, ինչ չգիտես: Բայց սովորիր այն ամենը, ինչը պետք է իմանալ»

Ժամանակակից դպրոցի առջև ուսուցման և դաստիարակության ոլորտում գոյություն ունեցող բազմաթիվ խնդիրներից առաջնայինների շարքում են սովորողների հոգևոր- բարոյական դաստիարակության , արժեքային համակարգի ձևավորման խնդիրները:

Գաղտնիք չէ, որ այսօր հայ աշակերտի արժեքային համակարքը խարխլված է, իսկ արժեքները խեղաթյուրված, շատ շրջանավարտներ այսօր չունեն ամուր հոգևոր առանցք, պատկերացում չունեն վարքի բարոյական մոտիվների իսկական արժեքի մասին, չեն գիտակցում դրանց դերը իրենց ուղին ընտրելիս, մեծամասամբ նյութապաշտ են:

«Քաղաքացիական կյանքին նախապատրաստությունը սովորողներից պահանջում է այնպիսի կարևոր իմացական հմտությունների զարգացում, ինչպիսիք են՝ սեփական կարծիք ձևավորելու , փորձի իմաստավորման , որոշակի եզրահանգումներ կատարելու , հիմնավորումների տրամաբանական շղթա կազմելու , հստակ և վստահ ինքնահաստատման հմտությունները: Սական իմացական այս հմտությունները բավարար չեն անձի քաղաքացիական էությունը ձևավորելու համար: Ժամանակակից մարդկությունը կանգնած է միասնական , գործունակ հասարակություն ստեղծելու խնդրի առջև: Առաջնահերթ խնդիր է սովորողներին դաստիարակել սեփական և հասարակական շահերի ընդհանրությունը գնահատելու կարողությամբ»: «Հասարակության արժանավոր անդամներ են հանդիսանում այն մարդիկ, ովքեր տվյալ սոցիալական կառուցվածքի շրջանակներում կարողանում են ոչ միայն համագործակցել և հաշտ ապրել իրենց շրջապատող մարդկանց հետ , այլև իմաստավորել պատմության ընթացքը , կարևոր ճակատագրական որոշումներ կայացնել այն մասին, թե ինչպես վարվել հանուն գերագույն բարօրության: Դեռ ավելին՝ նրանք պետք է դրսևորեն իրենց համաձայն իրենց որոշումների , հարազատ մնալով այն սկզբունքներին , որոնց վրա հիմնվում է կյանքը տվյալ հասարակությունում»:

Իմ կարծիքով՝ վերը նշված անձնային որակներից ամենակարևորը «հասարակական շահերի ընդհանրության» ընկալումն է: Շատ կարևոր է , որ քաղաքացին իր երկրի շահերը չառանձնացնի իր շահերից: Այստեղ տեղին է հիշել մեծն Նժդեհին. «Միայն նա է ճշմարտորեն մեծը, ով մեծ զավակն է նախ իր ժողովրդի և ապա մարդկության»:

Մանկավարժների ու գիտնականների հետազոտությունները ցույց են տվել , որ կտրուկ նվազել է աճող սերնդի հոգևոր- բարոյական դաստիարակության հանդեպ հասարակության հոգատարությունը, քանզի արագ փոխվում են կենսական նպատակներն ու բարոյական կողմնորոշիչները:

Այսօր շատ սովորողներ , շրջանավարտներ չունեն ամուր հոգևոր առանցք, մշուշոտ պատկերացում ունեն վարքի բարոյական մոտիվների իսկական արժնեքի մասին , չեն գիտակցում նրանց դերը՝ իրենց կենսական ուղին ընտրելիս: Նրանք հաճախ կարևորությունը տալիս են փողին՝ որպես նյութական բարեկեցության «ուժ», սակայն

պատշաճ նշանակություն չեն տալիս, թե ինչպես և ինչ միջոցներով է այն ձեռք բերվում, ինչքան կարևոր է աշխարհընկալման համար խղճի հանգստությունը: Նրանք չեն գիտակցում , որ իրենց բոլոր ջանքերը պետք է ուղղվեն հայրենիքի բարգավաճմանն ու զարգացմանը: Սովորողներն ու շրջանավարտները պետք է յուրացնեն առողջ կենսակերպի կանոնները և հանդիսանան այն ներուժը, որը կկարողանա զարգացնել երկիրը:

Հոգևոր-բարոյական դաստիարակությունը պետք է ընթանա որպես շարունակական պրոցես և կրի համակարգված բնույթ, քանի որ ուսուցման, դաստիարակության, զարգացման փոխկապակցված գործընթացը իրականացվում է մարդու ողջ կյանքի ընթացքում: Ուստի դասի ընթացքում բացի ուսումնական խնդիրներից , ուսուցիչը պետք է նաև լուծի դաստիարակչական խնդիրները:

Դպրոցում սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորումը բավական մեծ թվով գործառույթներ է պահանջում : Աշխատանքը կարող է արդյունավետ իրականացնել առարկայական դասաժամերի, դասղեկական ժամերի ընթացքում , արտադասարանական միջոցառումների միջոցով՝ աշակերտական ինքնակառավարության մարմինների գործունեության ընթացքում , ինչպես նաև համադպրոցական, միջդպրոցական , համայնքային կրթադատիարակչական աշխատանքերի ընթացքում: Թիրախը առարկայական դասերը՝ իրենց դաստիարակչական բաղադրիչներով:

Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ , ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը, դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն , ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն,հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:

Սովորողների մոտ արժեքային համակարգի խնդիրները լուծելու համար յուրաքանչյուր աշխատանք սկսելուց առաջ կարևոր է պատկերացնել նպատակը, որին ուզում ենք հասնել, քանի որ ամբողջական նպատակի ձևավորումը մեզ հնարավորություն է տալիս մշակելու արդյունավետ քայլեր և գործընթացներ:

Ուսումնական ծրագրի բովանդակությունը , դասի ուսումնադաստիարակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը, խնդիրները, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Առարկայական դասաժամերին , նախ ակնառու կերպով ուսուցիչը պետք է պատկերացնի, թե ինչպիսի որակներ կուզենա ձևավորել սովորողների մոտ, թե ինչպես պլանավորի դաստիարակչական բաղադրիչը, ինչպես սովորողներին մոտիվացնի , և իրականցնի գործընթացը:

«Հանրակրթական ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները բխում են հանրակրթության հիմնական նպատակներից և սահմանվում են որպես ընդհանրական կարողություններ(կոմպետենցիաներ) , որոնք ներառում են փոխկապակցված ու փոխլրացնող գիտելիքներ, հմտություններ և արժեքներ, և անհրաժեշտ են շրջանավարտի անձնային կայացման, քաղաքացիական ակտիվության, սոցիալական ինտեգրման և հետագա ուսումնառության ու գործունեության համար»:

Մաթեմատիկայի դասի դաստիարակչական բաղադրիչը պատշաճ կերպով պլանավորելու համար յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է՝

- ծանոթ լինել ընդհանրական որակական պահանջներին,
- իմանալ առարկայի ծրագրերի չափորոշիչների միջոցով սահմանված արժեհամակարգը,
- կարողանալ ընտրել և առանձնացնել այն որակներն ու արժեքները, որոնք կարելի է ձևավորել տվյալ թեմայի կամ թեմաների շրջանակում:
- ընտրել իր գործունեության առանձին փուլերում այն ճիշտ տեղը և մեթոդները, որոնցով հնարավոր կլինի իրականացնել սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման խնդիրը:

Ուսուցման մեթոդները պատշաճ կերպով կիրառելիս (համագործակցային, նախագծային, հետազոտական) սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման մեծ հնարավորություններ են ընձեռում: Լավ հնարավորություններ են ընձեռում նաև անհատական հետազոտական աշխատանքները (իքնագնահատականի, սեփական զարգացման, կարիերայի պլանավորման հարցում), հավասարը հավասարին մեթոդով աշխատանքները (ինտելեկտուալ խաղեր, բանավեճեր, երկխոսություններ և այլն):

Իր գործունեության ընթացքում ուսուցիչը որպեսզի կարողանա սովորողի մոտ լիարժեք ձևավորի արժեքային համակարգ, պետք է առաջնորդվի կրթակարգի պահանջներով՝ աննշան փոփոխություններով:

Սովորողը պետք է.

1. Լինի հայրենասեր, սիրի հայրենիքը
2. ունենա ինքնուրույն մտածելակերպ
3. կարողանա համագործակցել տարեկիցների, մեծերի և փոքրերի, խնամողների հետ
4. ունենա պետական չափորոշչով սահմանված գիտելիքների համակարգ, և ձեռք բերված գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն
5. լինի պատասխանատու , նախաձեռնող և հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի
6. լինի բնության և շրջակա միջավայրի պաշտպան
7. հարգի համամարդկային արժեքները, ճանաչի համաշխարհային քաղաքականության նվաճումները
8. գիտակցի հայ ժողովրդի և հայոց պատմության դերը համաշխարհային քաղաքականության մեջ
9. լիարժեք տիրապետի ՀՀ պետական լեզվին՝ հայերենին
10. կարողանա օգտվել հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաներից

11. իմանա առողջ ապրելակերպի, անվտանգ կենսագործունեության կանոնները և դրանք կիրառի կյանքում
12. կարողանա հաղորդակցվել առնվազն երկու օտար լեզուներով:

Այսպիսով անձնային որակներից շատերը բացահայտելում ձևավորելում զարգացնելու համար, առարկայական դասաժամերն ավելի արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է դասերը կառուցել առարկաներին առնչվող թեմաներով, կարելի է կազմակերպել հետազոտություններ, երկխոսություններ, ուսումնասիրել մաթեմատիկոսների կյանքն ու գործունեությունը, կատարել վերլուծություններ և այլ աշխատանքներ, որոնք ավելի կմեծացնեն սովորողների հետաքրքրությունը առարկայի նկատմամբ, ինչն էլ կխթանի սովորողի արժեհամակարգի ձևավորման խնդրի լուծմանը:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դաստեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե

մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

«Անհայրենասեր ժողովուրդը, եթե ոչ այսօր,

անհայրենիք կդառնա վաղը»: Գ. Նժդեհ

<< Մաթեմատիկա>> առարկայի ուսումնասիրության առարկան ընդգրկում է Ժամանակակից հասարակությանն ու մարդկային գործունեության ոլորտները, գիտությանն ու տեխնիկական առաջընթացն անհնար է պատկերացնել առանց մաթեմատիկայի: Մարդկության ողջ պատմության ընթացքում մաթեմատիկան եղել է շրջակա աշխարհի ճանաչման միջոց, գործիք, որն օգնել է բնակգիտական և մի շարք հումանիտար ոլորտներում հաշվարկներ և հետազոտություններ անելու համար: Գնալով ավելանում են մարդկային գործունեության ու գիտության այնպիսի ոլորտներն ու ճյուղերը, որտեղ լայնորեն կիրառում են մաթեմատիկական մեթոդներն ու մաթեմատիկայի տարբեր բաժիններում ստացված արդյունքները: Մաթեմատիկական կրթությունը մարդու անհատականությունը, մտավոր ու ստեղծագործական պոտենցիալը ձևավորող կարևոր միջոց է: Մարդկային գործունեության ցանկացած ոլորտում, ի լրումն հատուկ գիտելիքների, անհրաժեշտ են նաև տրամաբանորեն մտածելու կարողություն, փաստարկները ճիշտ և հետևողականորեն կառուցելու, մտքերը ճշգտիտ և պարզ արտահայտելու ունակություններ, իրավիճակը քննադատաբար գնահատելու, վերլուծելու, կարևորն ու երկրորդականը զանազանելու, անջատ փաստերը համադրելու, ընդհանրացումներ անելու հմտություններ: Բոլոր այդ կարողություններն ու հմտություններն առաջին հերթին և առավելապես ձևավորվում ու զարգանում են մաթեմատիկա ուսումնասիրելու միջոցով: Այսպիսով, «Մաթեմատիկա» առարկայի ուսուցումը նպատակաուղղված է Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ձևավորմանը: Շատ կարևոր է հաշվի առնել «Մաթեմատիկա» առարկայի ուսուցման հիմնական նպատակները

● մաթեմատիկական այնպիսի գիտելիքների ու կարողությունների հաղորդումն ու ձևավորումը, ինչն անհարաժեշտ է գործնական կիրառությունների, հարակից առարկաների ուսումնասիրման և կրթության շարունակականության համար,

● սովորողների մտքի պարզության ու հստակության, քննադատական, վերլուծական, տրամաբանական և ալգորիթմական մտածողության, ինտուիցիայի, տարածական պատկերացումների ձևավորումն ու զարգացումը,

● մաթեմատիկայի, որպես գիտության ու տեխնիկայի ունիվերսալ լեզվի, երևույթների ու պրոցեսների մոդելավորման միջոցի մասին պատկերացումների ձևավորումը,

● մաթեմատիկայի, որպես համամարդկային մշակույթի բաղադրիչի, գիտատեխնիկական առաջընթացում նրա նշանակալի ներդրման ընկալման ձևավորումը,

Այդ պատճառով պետք է դասը ճիշտ կազմակերպվի՝ դասընթացը բխեցվի առարկայական չափորոշչի պահանջներից: Ես առավել կարևորում եմ առարկայի դրվածքի սկիզբը, որովհետև ամեն նորը պետք է մատուցվի այնպես, որ հետաքրքրություն առաջացնի: Իմ առջև առաջնային խնդիր եմ դրել, որ սովորողները կարողանան հայոց լեզվի արտահայտությունները գրառեն հանրահաշվի լեզվով, կարդան և հայոց լեզվով գրեն հանրահաշվական գրառումները, արժևորեն հայերենի դերը: Նպատակահարմար եմ գտել հետազոտությունն անցկացնել առանց փորձագետ հրավիրելու՝ ինքնուրուն, կոնկրետ դասարանի և դասաժամի շրջանակում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտական աշխատանքիս համար ընտրել եմ 7-րդ դասարանը, որտեղ նոր ուսուցանվող առարկա է համարվում «Հանրահաշիվ» առարկան: Դասարանում սովորողների թիվը 28 է, որից 16-ը՝ աղջիկ, 12-ը՝ տղա: Առաջին փորձարարական դասն անցկացրել եմ սեպտեմբերի 4-ին, այն մուտքի դաս էր: Դասի թեման « Հանրահաշվի այբուբենը» : Դասի սկզբին կատարեցի հայտորոշիչ գնահատում՝ գրավոր: Նախապատրաստել էի 4 պարզ մաթեմատիկական գործողություններից բաղկացած առաջադրանքներ՝ սովորողների նախնական գիտելիքներին իրազեկ լինելու նպատակով: Հայտորոշիչ գնահատման արդյունքում եկա այն եզրահանգման, որ աշակերտների որոշ մասը չի կարողանում ճիշտ կարդալ թվերը, այսինքն՝ նրանց մոտ նկատեցի մայրենի լեզվի՝ որպես կարևորագույն արժեքի նկատմամբ որոշակի թերացում: Այդ պատճառով իմ առջև հստակ խնդիր դրեցի, հետագա դասերի ընթացքում հասնել նրան, որ սովորողները կարողանան հայոց լեզվի արտահայտությունները գրառեն հանրահաշվի լեզվով, կարդան և հայոց լեզվով գրեն հանրահաշվական գրառումները, արժևորեն հայերենի դերը:

Հաջորդ փուլում սովորողներին ծանոթացրեցի դասագրքի կառուցվածքին, մեր հետագա անելիքներին: Ընթերցեցինք տեքստը, քննարկեցինք, որից հետո կատարեցինք հայտորոշիչ թեստի վերլուծություն: Այնուհետև, անցկացրեցինք բանավեճ-քննարկում հետևյալ հարցի շուրջ. Ո՞րն է կարևոր ձեր կյանքում՝ լույսը, թիվը, թե՞ Մեսրոպ Մաշտոցը: Դասվորել հերթականությամբ և հիմնավորել պատասխանը: Ցուցում: Լույսը տեսանելի է

դարձնում մեր շրջապատը, թիվը լուսավորում է մեր միտքը, Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է հայոց գրերը, որոնք լուսավորում են հայի հոգևոր աշխարհը։

Հետադարձ կապ ապահովելուց հետո հանձնարարաեցի տնային առաջադրանք։

Հայտորոշիչ թեստի արդյունքների ամփոփում քարտեզագրման մեթոդով

	1.կարողանում է կատարել գումարում	2.կարողանում է կատարել հանում	3. կարողանում է կատարել բազմապատկում	4. կարողանում է կատարել բաժանում
Ամբողջական	71 %	71%	68 %	61%
Թերի	18 %	18%	14%	21 %
Սխալ	11%	11%	18%	18%
Չգիտի	0	0	0	0

Հետազոտության համար հաջորդ դասն անցկացրեցի «Հանրահաշվի այբուբենը» թեման ավարտելուց։ Դասն անցկացրել եմ հոկտեմբերի 10-ին, դասի թեման ՝ «Վարժությունների լուծում. «Հանրահաշվի լեզուն» գլխից» ։ Արդյունքները ստուգելու համար կատարեցի ձևավորող գնահատում՝ ամփոփիչ աշխատանք գրավոր՝ թեստային աշխատանքի։ Նպատակ ունեի ստուգել սովորողների գիտելիքները, ամփոփել անցած նյութը և ավելի ամրապնդել, հասկանալ՝ արդյո՞ք թեման ուսումնասիրելու սկզբին իմ առջև դրված նպատակին հասել եմ, թե՞ ոչ։ Առաջադրանքներն ունեին հետևյալ բովանդակությունը. հայոց լեզվի արտահայտությունը գրառել հանրահաշվի լեզվով և հակառակը, նախադասությունը գրառել հավասարության տեսքով և հակառակը, պարզեցնել արտահայտությունը, կատարել հանրահաշվական գործողություններ, գտնել արտահայտության թվային արժեքը։ Աշխատանքն ավարտելուց հետո կատարեցին վերլուծություն և ինքնագնահատում և գնահատում իմ կողմից։ Ինքնագնահատման համար օգտվեցին հետևյալ ռուբրիկից.

Կարողանում է հայոց լեզվով արտահայտությունը	Կարողանում է գտնել	Կարողանում է պարզեցնել արտահայտությունը	Կարողանում է կատարել

գրել հանրահաշվի լեզվով	արտահայտության թվային արժեքը		հանրահաշվական գործողությունները

♥ - գերազանց է կատարել

💡 - սխալներով է կատարել

◔ - մասնակի/ օգնությամբ/ կարողացել կատարել

☹ - չի կարողացել կատարել

Որից հետո կատարեցի հետադարձ կապ, հանձնարարեցի տնային առաջադրանք՝ անցած նյութի ամրապնդում՝ թեմատիկ գրավոր աշխատանքի նախապատրաստում:

Ազգանուն, անուն, հայրանուն	Կարողանում է հայց գրել հանրահաշվի լեզվով	Կարողանում է գտնել արտահայտության թվային արժեքը	Կարողանում է պարզեցնել արտահայտությունը	Կարողանում է կատարել հանրահաշվական գործողությունները
Սովորող 1	♥	♥	♥	♥
Սովորող 2	♥	♥	☹	☹

Սովորող 3	♥	♥	◔	♥
Սովորող 4	♥	♥	◔	◔
Սովորող 5	♥	♥	💡	💡
Սովորով 6	♥	♥	◔	◔
Սովորող 7	♥	♥	◔	◔
Սովորող 8	♥	💡	☹	☹
Սովորող 9	♥	◔	☹	☹
Սովորող 10	♥	♥	◔	◔
Սովորող 11	♥	♥	♥	♥
Սովորող 12	♥	♥	◔	◔
Սովորող 13	♥	♥	◔	◔
Սովորող 14	♥	♥	◔	◔
Սովորող 15	♥	♥	♥	◔
Սովորող 16	♥	♥	◔	◔
Սովորող 17	♥	◔	♥	◔
Սովորող 18	♥	💡	☹	☹
Սովորող 19	♥	♥	◔	◔
Սովորող 20	♥	♥	♥	♥
Սովորող 21	♥	◔	💡	💡
Սովորող 22	♥	♥	◔	◔
Սովորող 23	♥	◔	◔	◔
Սովորող 24	♥	◔	◔	◔
Սովորող 25	♥	♥	♥	♥
Սովորող 26	♥	♥	♥	♥
Սովորող 27	♥	♥	◔	◔
Սովորող 28	♥	💡	☹	☹

♥ - գերազանց է կատարել

- սխալներով է կատարել

- մասնակի է կարողացել կատարել

☹ - չի կարողացել կատարել

Արդյունքների ամփոփում

	Կարողանում է հայոց լեզվով արտահայտությունը գրել հանրահաշվի լեզվով	Կարողանում է գտնել գոգի տրամաբանական պրոբլեմի արմատը	Կարողանում է ուսանելիությունը ներկայացնել արտահայտությամբ	Կարողանում է կատարել գործողություններ հանրահաշվական արտահայտությունների
գերազանց է կատարում	100%	71 %	25 %	10 %
սխալներով է կատարում	0	18 %	50 %	54 %
մասնակի կարողանում է կատարել	0	11 %	18 %	8 %
չի կարողացել կատարել	0	0	17 %	18 %

Վերը ներկայացված երկու դասերի արդյունքներն ամփոփելուց և վերլուծելուց հետո եկել եմ այն եզրակացության, որ աշակերտներն իրենց կարողունակություններն որոշակի զարգացրել են, հատկապես արագ կողմնորոշվում են հայոց լեզվով ներկայացված արտահայտությունները՝ հանրահաշվական գործողություններով ներկայացնելիս: Ինչը խոսում է այն մասին, որ աշակերտների մոտ կարողացել եմ զարգացած լեզվական կարողությունները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հետազոտությունս կատարելու ընթացքում կրկին համոզվեցի նրանում, որ արժեքային համակարգի ձևավորումն այսօր առավել քան երբևէ՝ պետք է լինի գերխնդիր է և կարևորագույն նպատակ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաներն իրենց օրվա մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հետևաբար, հրամայական է դառնում, որ ուսուցիչը պետք է ստանձնի իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Արժեհամակարգ ձևավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ աննկարագրելի բերկրանք է՝ տեսնել իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված, ինչը զգացի ես, երկրորդ դասի ընթացքում:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելու արդյունքում եկել եմ հետևյալ եզրահանգումներին.

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
- Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:
- Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:
- Ե՛վ լեզուն, և՛ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:
- Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ աշակերտների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:

Վերը շարադրվածից ելնելով առաջարկում եմ.

- Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:
- Դասաժամերին հավելյալ քննարկումները, անհատների կյանքի

պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու:

- Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ананьев Б. Г., О проблемах современного человекознания
2. Գևորգյան Ա. «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում»
3. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն»
4. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:
5. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:
6. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:
7. «Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր»
8. «Հանրակրթական պետական չափորոշիչ»
9. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
10. https://www.arlis.am/documentview
11. https://kznakhimnadram.blogspot.com/2021/08/2021-2022.html

Դաս 1-ին

Դասի պլան

Ամիս, ամսաթիվ- 04.09.2023թ.

Առարկան- Հանրահաշիվ

Դասարանը – 7-րդ

Թեման- Հանրահաշվի այբուբենը

Նպատակը , խնդիրները – Հանրահաշվի լեզվի բազային տարրերի ձևավորումը։ Փոփոխականի, հանրահաշվական արտահայտությունների հետ ծանոթացում։

Վերջնարդյունքը - . կարդա հունարեն, լատիներեն տառերը

. հայոց լեզվի արտահայտությունները գրառել հանրահաշվի լեզվով

. կարդա և հայոց լեզվով գրի հանրահաշվական գրառումները

. արժևորի հայենի դերը

Դասի ընթացքը **45 րոպե**

. **Կազմակերպչական մաս** 2 րոպե

. **Խթանման փուլ** – Հայտորոշիչ գնահատում / թեստ/ 20 րոպե

Հայտորոշիչ թեստ

Դասարանը- 7-րդ

Աշակերտների թիվը -28

Առարկան- Հանրահաշիվ

Նպատակը – Նոր ուսուցանվող առարկայի վերաբերյալ նախնական գիտելիքների ստուգում

Առաջադրանքների տիպը- պարզ լուծում պահանջող վարժություններ

Առաջադրանքների քանակը- 4

Բարդության աստիճանը -պարզ

Թեստի կատարմանը հատկացված ժամանակը-10-15 րոպե

Թեստ

Վարժ . 1 Կատարել գումարումը.

ա. 0,615 + 21 = բ. 23,69 + 4,5 =

Վարժ. 2 Կատարել հանումը .

ա. 46,39 -27, 65 = բ. 92,8 – 5,47 =

Վարժ.3 Կատարել բազմապատկումը.

ա. 2,475 . 85, 2 = բ. 273,2 .0,01 =

Վարժ. 4 Կատարել բաժանումը

ա. 29,7 : 0,495 = բ. 1,09 : 0,1 =

Հայտորոշիչ թեստի արդյունքների ամփոփում քարտեզագրման մեթոդով

	1.կարողանում է կատարել գումարում	2.կարողանում է կատարել հանում	3. կարողանում է կատարել բազմապատկում	4. կարողանում է կատարել բաժանում
Ամբողջական	71 %	71%	68 %	61%
Թերի	18 %	18%	14%	21 %
Սխալ	11%	11%	18%	18%
Չգիտի	0	0	0	0

Որից հետո նեկայացնել ուսումնասիրվող առարկայի խնդիրները, դասագրքի կառուցվածքը։

.Իմաստի ընկալման փուլ / 8- 10 րոպե/ - Ընթերցել տեքստը, քննարկել, որից հետո կատարել հայտորոշիչ թեստի վերլուծություն։

.Կշռադատման փուլ /5-6 րոպե /– Խմբային բանավեճ

Ո՞րն է կարևոր ձեր կյանքում՝ լույսը, թիվը, թե՞ Մեսրոպ Մաշտոցը։ Դասվորել հերթականությամբ և հիմնավորել պատասխանը.

Ցուցում։ Լույսը տեսանելի է դարձնում մեր շրջապատը, թիվը լուսավորում է մեր միտքը, Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է հայոց գրերը, որոնք լուսավորում են հայի հոգևոր աշխարհը։

.ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / 5 րոպե/

1.Ի՞նչի մասին էր մեր այսօրվա դասը։

2. Ի՞նչ նոր բան սովորեցինք այսօր։

3. Ինչպե՞ս էինք հիշում թվաբանական գործողությունները տասնորդական կոտորակների հետ։

Տնային առաջադրանք /2 րոպե/ – Վարժություն 10, 11։